*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 8-ի N 01.1/80-2/1901-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 6-ի N 06/3-8/3342-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սմարթլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01548908) 2017 թվականի հունվարի 9-ին կնքված N 01/2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը թղթի և գրենական պիտույքների ձեռքբերում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 095 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 3 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 8-ի N 01.1/80-2/1899-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 6-ի N 06/3-8/3343-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեդիամաքս մեդիա քոմփանի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00144609) 2016 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված N 301216-մ7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ցանցային լրատվամիջոցների մոնիտորինգի ապահովում օնլայն համակարգի միջոցով՝ 360,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 096 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 4 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 8-ի N 01.1/80-2/1920-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 9-ի N 06/3-8/3790-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2012 թվականի հունվարի 25-ին կնքված N 230834 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 097 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-856-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 7-ի N 01.1/80-2/1811-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի փետրվարի 3-ի N 06/3-8/3168-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի կահավորում» ծրագրի մասին» N Մ-856-Ա որոշմամբ (2016 թվականի հուլիսի 1-ի N Մ-570-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 15-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի սեպտեմբերի 29-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 098 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-708-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 8-ի N 01.1/80-2/1827-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի փետրվարի 3-ի N 06/3-8/3171-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի կահավորում» ծրագրի մասին» N Մ-708-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի սեպտեմբերի 29-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 099 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1145-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 8-ի N 01.1/80-2/1840-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 8-ի N 06/3-8/3755-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին **N 1** (Հայաստանի մանուկների հիմնադրամ)» N Մ-1145-Ա որոշման 1-ին կետի 2-րդ պարբերությունում «850,000 դրամի չափով, առանց ԱԱՀ-ի» բառերը փոխարինել «1,100,000 դրամի չափով, առանց ԱԱՀ-ի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 100 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՋԵՐՄՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 6-ի N 01.1/80-2/1700-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի 7-ի N 04/14/1662-17, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի փետրվարի 7-ի N ԻԱ/ԳՂ-2/777-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի փետրվարի 14-ի N 06/3-8/4344-17 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի փետրվարի 7-ի N 01/21.1/464-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 152,356,700 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համայնքներում անհատական ջերմոցների կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ատիկա Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237598) 2016 թվականի նոյեմբերի 11-ին կնքված N ՀՀ/ՏՋ-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեսունհինգ ջերմոցների կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 89,415,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811047) 2016 թվականի նոյեմբերի 11-ին կնքված N ՀՀՏՀ-06/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեսունհինգ ջերմոցների կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811047) 2016 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N ՀՀՏՀ-07/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քսանչորս ջերմոցների կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Բիզնես Լենդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01234677) 2016 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N ՀՀ/ՏՋ-02/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քսանչորս ջերմոցների կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 61,540,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«30» հունվարի 2017թ.

# « Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համայնքներում անհատական ջերմոցների կառուցում »

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | - շահագրգռել սահմանամերձ գյուղերի բնակիչներին զբաղվել բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ,<br>-նպաստել գյուղացիների սննդամթերքի խնդիրների լուծմանը,<br>-գոյատևելու պայմաններ ստեղծել սահմանամերձ գյուղերից չհեռանալու համար՝<br><br>100 քառակուսի մետր մակերեսով ջերմոցներ կառուցել և անհատույց հանձնել (նվիրատվության պայմանագրի համաձայն տաս տարի չօտարելու պայմանով) վիճակահանության սկզբունքով ընտրված ընտանիքներին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հետևյալ գյուղերում.<br><br>Ոսկան-6<br>Արծվաբերդ-4<br>Ներքին Ծաղկավան-4<br>Բերդավան-6<br>Կոթի-5<br>Այգեհովիտ-21 |



| | | |
|---|---|---|
| | | Խաչարձան-2<br>Դիտավան-8<br>Բաղանիս-1<br>Կողբ-1<br>Ջորական-1 |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ոսկան, Արծվաբերդ, Ներքին Ծաղկավան, Բերդավան, Կոթի, Այգեհովիտ, Խաչարձան, Դիտավան, Բաղանիս, Կողբ, Ջորական համայնքները, գյուղատնտեսության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է՝ 152.356.700,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ոսկան, Արծվաբերդ, Ներքին Ծաղկավան, Բերդավան, Կոթի, Այգեհովիտ, Խաչարձան, Դիտավան, Բաղանիս, Կողբ, Ջորական համայնքները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ նոյեմբերի 11 -ից մինչեւ 2017թ.հունիսի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ. նոյեմբերի 11 -ից մինչեւ 2017թ. հունիսի 30-ը ջերմոցներ կառուցել Տավուշի մարզի Ոսկան, Արծվաբերդ, Ներքին Ծաղկավան, Բերդավան, Կոթի, Այգեհովիտ, Խաչարձան, Դիտավան, Բաղանիս, Կողբ, Ջորական համայնքներում՝ 152.356.700,00 դրամ արժողությամբ: |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ատիկա Շին» ՍՊԸ-ի կողմից Այգեհովիտ, Դիտավան, Խաչարձան և Արծվաբերդ համայնքներում թվով 35 ջերմոցների կառուցում՝ 89.415.900,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական հսկողության իրականացում՝ 800.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Բիզնես Լենդ» ՍՊԸ-ի կողմից Ներքին Ծաղկավան, Բաղանիս, Ոսկեվան, Կոթի, Բերդավան, Կողբ և Ձորական համայնքներում թվով 24 ջերմեցների կառուցում՝ 61.540.800,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական հսկողության իրականացում՝ 600.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
Արմինե Դայրբինյանը

2/1



2/1

Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի ցանկ

Ջերմոցների ծրագրի 3-րդ փուլ

**1. Ոսկեվան 6 հոգի**

Ալեքսանյան Սերյոժա 094-73-72-73

1. *Ալեքսանյան Վալերի* *094-80-33-73*
2. *Եգանյան Ալիկ* *077-88-85-07*
3. *Սաֆարյան Ռաֆիկ* *094-06-33-93*
4. *Սահակյան Ջիվան* *094-15-06-49*
5. *Սահակյան Հայկ* *094-25-22-43*
6. *Սարիբեկյան Հունան* *093-44-90-97*

**2. Արծվաբերդ 4 հոգի**

Ուզունյան Վոլոդյա 093-72-77-57

1. *Լոպյան Լևոն* *077 62 66 53*
2. *Վարդանյան Բաբկեն* *093-67-50-40*
3. *Աղաբաբյան Արմեն* *094-12-11-52*
4. *Աղաբաբյան Արտակ* *094-85-82-88*

**3. Ներքին Ծաղկավան 4 հոգի**

Աթաբեկյան Նաիրի 093-55-54-95

*Լուսիկ Յոլյան*

*094-50-69-0*

1. *Մխիթարյան Մարգպետ* *094-77-07-97*
2. *Մխիթարյան Ռուդիկ* *094-82-28-08*
3. *Գաբրիելյան Անահիտ* *094-67-07-31*

## 4. Բերդավան 6 հոգի

Մուղդուսյան Սմբատ 094-094-030

2/1

1. Աթաբեկյան Միեր 093-91-00-16
2. Ղազարյան Արմեն 093-05-74-70
3. Չիլինգարյան Ներսես 093-98-80-01
4. Ասատրյան Սևան 093-96-51-91
5. Հանիսյան Արայիկ 091-10-78-44
6. Ասատրյան Թաթուլ 055-99-79-72

## 5. Կոթի 5 հոգի

Մելիքյան Ֆելիքս 093-77-90-70

1. Ղազինյան Արմեն 094-95-53-65
2. Շահնազարյան Գառնիկ 077-70-71-74
3. Ամիրխանյան Ռոբերտ 094-30-07-09
4. Ղազարյան Սահակ 077-43-37-67
5. Վերանյան Հովիկ 077-84-73-03

## 6. Այգեհովիտ 21 հոգի

Գրիգորյան Լևոն 093-43-31-82

1. Աչինյան Արամ 077-83-74-82
2. Գևորգյան Իվան 077-50-72-23
3. Հովսեփյան Հենրիկ 093-63-90-98
4. Աղինյան Արամ 098-00-55-93





2/1

5. Ազատյան Կամո 093-19-39-53
6. Շահինյան Հակոբ 093-40-23-10
7. Ահարոնյան Արշավիր 093-80-57-70
8. Ղուկասյան Էդիկ 077-77-42-64
9. Աչինյան Արարատ 077-32- 36-30
10. Դալլաքյան Հրանտ 098-93-41-28
11. Կարապետյան Սերոժ 093-47-22-48
12. Սարիբեկյան Աշոտ 094-55-01-72
13. Ահարոնյան Գարուշ 077-79-77-73
14. Ճաղարյան Արմեն 094-44-41-29
15. Ամիրջանյան Հովսեփ 098-17-47-67
16. Գևորգյան Արթուր 094-80-38-11
17. Ղազարյան Օնիկ 094-61-24-01
18. Խոջումյան Արմեն 093-40-20-94
19. Գրիգորյան Սամվել 077-89-32-25
20. Խոջումյան Նվարդ 094-100-059
21. Գյոզչյան Կարապետ 094-111-232

## 7. Խաչարձան 2 հոգի

Շահնազարյան Գագիկ 093-30-29-59

1. Բուդաղյան Արարատ 098-46-72-96
2. Մովսիսյան Բագրատ 093-76-05-91

## 8. Դիտավան 8 հոգի

Սարիբեկյան Հակոբ 093-73-83-03

1. Մարության Արմեն 077-50-61-78

2. Մանուչարյան Ռիմա 094-65-17-29
3. Շուշանյան Գալինա 077-73-75-51
4. Սարիբեկյան Գոհար 094-13-73-61
5. Ուսուբով Շիրակ 098-73-75-71
6. Բայրամյան Միքայել 098-10-06-03
7. Հախվերդյան Անուշավան 077-51-88-50
8. Զաքարյան Բենիկ 093-78-62-43

2/1

9. Բաղանիս 1 հոգի

Սահակյան Նարեկ 094-89-39-93

1. Սահակյան Արտավազդ 093-50-94-90

10. Կողբ 1 հոգի

Աղաբաբյան Արսեն 093-00-60-20

1. Բաղինյան Սլավիկ 077-13-85-99

11. Ջորական 1 հոգի

1. Գասպարյան Արսեն 094-85-53-71

Ընդհանուր առմամբ՝

11 գյուղ 59 շահառու

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 101 - Ա**

**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՔՅՈՒՐԱԹԱՂ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ 150 ՏԵՂԱՆՈՑ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 14-ի N 01.1/80-2/2202-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի 9-ի N 04/14/1799-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի փետրվարի 9-ի N 06/3-8/3938-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 10,142,200 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և 150 տեղանոց հանդիսությունների տան կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2017 թվականի փետրվարի 6-ին կնքված N ԼՂ-Կ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղափոխում՝ 10,142,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«07» փետրվարի 2017թ.

## «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և 150 տեղանոց հանդիսությունների տան կահավորում »
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի հիմնադրամի կողմից կառուցած համայնքային կենտրոնը և 150 տեղանոց հանդիսությունների տունը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ (ֆիզիկական և իրավաբանական անձիք) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, Հադրութի շրջան, Քյուրաթաղ գյուղ, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 10.142.200,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի |



| | | |
|---|---|---|
| | | Քյուրաթաղ գյուղի բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ փետրվարի 06-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 06-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Քյուրաթաղ գյուղի համայնքային կենտրոնի և հանդիսությունների տան կահավորում 2017թ փետրվարի 06-ից մինչեւ 2017թ.դեկտեմբերի 06-ը ընկած ժամանակահատվածում, արժողությունը՝ 10.142.200,00 դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 10.142.200,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինե Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 փետրվարի 2017 թվականի N Մ- 102 –Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի փետրվարի 17-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 9-ի N 01.1/80-2/975-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի փետրվարի 7-ի N 02/14/1663-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի փետրվարի 10-ի N 04/07-1/1627-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 10-ի N 06/3-8/4030-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող՝ 20,887,793.33 դրամ ընդհանուր արժողությամբ «Գրքերի բաշխում» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի մանուկների հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեռ ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
Փետրվարի 2017

## ԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ
**բարեգործական ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի մանուկներ հիմնադրամին պատկանող թվով 2998 հատ ուսուցողական և գեղարվեստական գրքերը նվիրաբերել ՀՀ մարզերում գտնվող դպրոցներին, հասարակական կազմակերպություններին և այլ կրթական կենտրոններին: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Հայաստանի մանուկներ հիմնադրամ, ՀՎՀՀ02569972, ՀՀ ք.Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, 8-րդ հարկ, 24 սենյակ |
| 4 | Ծրագրի կատարողը | Հայաստանի մանուկներ հիմնադրամ, ՀՎՀՀ02569972, ՀՀ ք.Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, 8-րդ հարկ, 24 սենյակ |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը - բնագավառը | ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն, Դալարիկ, Հացիկ, Քարակերտ, Լեռնագոգ, Ծենիկ, Վանանդ, Արագածոտն մարզի Արագածավան և Արտենի, Լոռու մարզի Աքորի, Արևածագ, Դեբետ, Դսեղ, Ձորագյուղ, Քարինջ, Մարց, Մեծ Այրում, Թումանյան և Սպիտակ, Շիրակի մարզի Բենիամին, Լանջիկ, Սառնաղբյուր, Տավուշի մարզի Բերդավան և Զորական, Սյունիքի մարզի Մեղրի, Լորի, Վաղատին, Գեղարքունիկի մարզի Լանջաղբյուր, Կոտայքի մարզի Հացավան համայնքներ: Բնագավառը - Կրթական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 20 887 792.33 /քսան միլիոն ութ հարյուր ութսուն յոթ հազար յոթ հարյուր իննսուն երկու դրամ, երեսուն երեք լումա/ , առանց ԱԱՀ: |

| | | |
|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Գետաշենի միջնակարգ դպրոց - 489,050.84 դրամ,<br>Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվ. N1 միջնակարգ դպրոց - 754,657.2 դրամ,<br>Հացիկի Ավ. Բաղդասարյանի անվ. միջնակարգ դպրոց - 629,192.12 դրամ,<br>Քարակերտի N1 միջնակարգ դպրոց - 629,192.12 դրամ,<br>Քարակերտի 2-րդ միջնակարգ դպրոց - 718,867.36 դրամ,<br>Լեռնագոգի Օ. Փակումեանի անվ. միջնակարգ դպրոց - 629,192.12 դրամ,<br>Ծենիկի միջնակարգ դպրոց - 430,237.04 դրամ,<br>Վանանդի միջնակարգ դպրոց - 363,607.56 դրամ,<br>Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց - 750,727.56 դրամ,<br>Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց - 629,192.12 դրամ,<br>Արտենիի թիվ 1 միջնակարգ դպրոց - 712,495.32 դրամ,<br>Արտենիի հիմնական դպրոց - 370,956.56 դրամ,<br>Աքորու միջնակարգ դպրոց - 587,518.72 դրամ,<br>Արևածագի միջնակարգ դպրոց - 587,518.72 դրամ,<br>Դեբեդի միջնակարգ դպրոց - 341,538.76 դրամ,<br>Դսեղի Հ. Թումանյանի անվ. միջնակարգ դպրոց - 437,538.76 դրամ,<br>Ձորագյուղի հիմնական դպրոց - 334,189.76 դրամ,<br>Քարինջի միջնակարգ դպրոց - 334,189.76 դրամ,<br>Մարցի միջնակարգ դպրոց - 334,189.76 դրամ,<br>Մեծ Այրումի միջնակարգ դպրոց - 400,819.24 դրամ,<br>Թումանյանի միջնակարգ դպրոց - 400,819.24 դրամ,<br>Բենիամինի միջնակարգ դպրոց - 363,607.56 դրամ,<br>Լանջիկի միջնակարգ դպրոց - 425,330.44 դրամ,<br>Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց - 670,821.92 դրամ,<br>Բերդավանի միջնակարգ դպրոց - 674,751.56 դրամ,<br>Ձորականի միջնակարգ դպրոց - 334,189.76 դրամ,<br>Վաղաշենի միջնակարգ դպրոց - 516,981.4 դրամ,<br>Սպիտակի Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա ՀԿ - 516,981.4 դրամ,<br>Մեղրիի թիվ 2 միջնակարգ դպրոց - 516,981.4 դրամ,<br>Լոռի միջնակարգ դպրոց - 516,981.4 դրամ,<br>Լանջաղբյուրի Վ. Ադամյանի անվան միջնակարգ դպրոց - 827,170.24 դրամ,<br>Հացավանի միջնակարգ դպրոց - 516,981.4 դրամ,<br>Քարակերտի համայնքային կենտրոն - 206,792.56 դրամ<br>Համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբ - 103,396.28 դրամ,<br>Աքորի համայնքի Սմարթ Սենյակ - 638,518 դրամ,<br>Մեծ Այրում համայնքի Սմարթ Սենյակ - 638,518 դրամ,<br>Արևածագ համայնքի Սմարթ Սենյակ - 638,518 դրամ,<br>Թումանյան համայնքի Սմարթ Սենյակ - 638,518 դրամ,<br>Այգեհովիտ համայնքի Սմարթ Սենյակ - 638,518 դրամ,<br>Կոթի համայնքի Սմարթ Սենյակ - 638,518 դրամ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.02.2017-01.04.2017 |



| | | |
|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Գրքերը բաշխվելու են 2017 թվականի փետրվարի 1 ից մինչև 2017 թվականի ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածու Բաշխման գործընթացը կազմակերպելու է Հայաստանի մանուկներ հիմնադրամը իր աշխատակիցների օգնությամբ համաձայ ծրագրի իրականացման վայրերի: Այլ միջոցառումներ չեն նախատեսվում: |
| 10 | Ձեռք բերվելիք /ներմուծվող/ ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում ապրանքների ներմուծում կամ ձեռքբերում չի նախատեսվում: |
| 11 | Կազմակերպչական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմիններ հասարակական կազմակերպությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականաց[…] Children of Armenia Fund հիմնադրամի, Հ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների և անկախ աուդիտորակա կազմակերպության կողմից: |

**Իննեսա Գրիգորյան**

**Գործադիր տնօրենի ժ/պ**

**Հայաստանի մանուկներ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**17 փետրվարի 2017 թվականի N Մ- 103 - Ա**

**քաղ. Երևան**

### «ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ԱՅԳԵՊԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րության 2017 թվականի փետրվարի 14-ի N 01.1/80-2/2277-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի փետրվարի 13-ի N 02/14/1994-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի փետրվարի 15-ի N ԱԱՄ/ԱնՄ-2-1/1534-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 9-ի N 06/3-8/394517 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017 թվականի փետրվարի 15-ի N 101/104.3.2/661-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Համբարձումյան 2/37, ՀՎՀՀ՝ 00130776) իրականացվող՝ 6,150,000 դրամ արժողությամբ «Մանկական խաղահրապարակներ Սպիտակ քաղաքում և Այգեպար գյուղում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակու-թյուն՝

«Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2016 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղահրապարակների սարքավորումների պատրաստում՝ 6,150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարու-թյուն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

՛՛Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.՛՛ԲԿ Հայաստանյան. մնճ. կազմակերպության

Տն՝Անահիտ Քալ[illegible]ից

«01» 02 2017թ.

Խաղահրապարակներ Սպիտակ քաղաքում եւԱյգեպար գյուղում
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Խաղահրապարակները տեղադրվում է [illegible]ների տարածքում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ՛՛Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.՛՛ Բարեգործական Կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102,Ռեսեդա,Կալիֆորնիա 91355,Լոս Անջելես |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՛՛Ֆոքըս օն չիլդրեն - նաու,ինկ.՛՛ԲԿ Հայաստանյան մնճ.,ք.Երևան,Վ.Համբարձումյան 2շ,37 բն, ՀՎՀՀ 00130776 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Տավուշի մարզ,Այգեպար գյուղ, Լոռու մարզ,ք.Սպիտակ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | I եռ. 2017թ, 6,150,000ՀՀ դրամ առանց ԱԱՀ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Այգեպար գյուղի համայնք, Սպիտակ քաղաքի համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.02.2017թ – 31.05.2017թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1փուլ .01.02.2017թ.-20.02.2017թ. Սպիտակի քաղաքապետարանի եւ Այգեպարի գյուղապետարանի հետ նախապատրաստական աշխատանքների քննարկում եւ կատարում համայնքների կողմից<br>2 փուլ 20.02.2017թ.-30.03.2017թ.խաղային սարքերի պատվիրում և պատրաստում,բյուջե-6.150,000 դրամ<br>3 փուլ 30.03.2017թ-30.04.2017թ. սարքերի տեղադրում, |



| | | |
|---|---|---|
| | | 4 փուլ 31.05.2017թ. խաղահրապարակների հանձնումը համայնքներին: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Պայմանագիր 20.12.2016թ կնքված՛՛Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.՛՛ԲԿ-ի ,՛՛Մագնոն՛՛ԲԲԸ-ի միջև - խաղահրապարակի սարքավորումների արժեքը 6.150.000դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ծրագրի ընթացքի և վերջնական իրականացման վերաբերյալ |

Հայաստանյան մասնաճյուղ Armenian branch 00130776

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ-104-Ա**
**քաղ. Երևան**

## «ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 10-ի N 01.1/80-2/2090-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի փետրվարի 15-ի N ԱԱՄ/ԱնՄ-2-1/1533-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 13-ի N 06/3-8/4111-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված խառը բեռի (867 տեղ, 10,640.80 կգ ընդհանուր քաշով, 216,378 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7,177.88 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Կոտայքի և Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

"Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ."ԲԿ Հայաստանյան մասնաճյուղի անունով
"Հայկական միացյալ հիմնադրամի" կողմից ուղարկված 867տեղ 10640.8 կգ բրուտտո քաշով և 216378 ԱՄՆ դոլար արժողությամբ (ճանապարհածախսը 7177.88 ԱՄՆ դոլար) բեռի բաշխման

ՑԱՆԿ

| # | ապրանքի անվանում | տեղ | հատ | արժեք $ | քաշ բրուտտո կգ |
|---|---|---|---|---|---|
| 1 | անկողնու պարագա օգտ. | 43 | 1772 | 11770 | 668.1 |
| 2 | հագուստ օգտ. | 403 | 33542 | 154515 | 7660.5 |
| 3 | գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 6 | 370 | 479 | 102.1 |
| 4 | պայուսակ օգտ. | 12 | 503 | 3565 | 157.4 |
| 5 | կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 301 | 1932 | 28980 | 1003.0 |
| 6 | կտորեղեն(լոսկուտներ) նոր | 6 | 339 | 1420 | 85.1 |
| 7 | կոշիկ կանացի նոր(զույգ)(արհ.կաշվից) | 1 | 55 | 375 | 18.1 |
| 8 | հողաթափեր նոր (զույգ) | 15 | 180 | 1752 | 75.0 |
| 9 | դահուկների կոմպլեկտ օգտ | 2 | 2 | 300 | 10.0 |
| 10 | սնոուբորդ օգտ. | 2 | 2 | 40 | 7.7 |
| 11 | մանկական սայլակ օգտ. | 1 | 1 | 35 | 3.2 |
| 12 | բարձեր սինտետիկ նոր | 7 | 120 | 1200 | 74.0 |
| 13 | տակդիր | 39 | 11780 | 8569 | 521.2 |
| 14 | սեղանի փոքր սփռոց նոր | 6 | 2842 | 1200 | 61.7 |
| 15 | հաշմանդամի քայլակ օգտ. | 10 | 15 | 860 | 70.0 |
| 16 | հաշմանդամի հենակ օգտ. | 3 | 11 | 220 | 18.1 |
| 17 | հաշմանդամի սայլակ օգտ. | 1 | 1 | 250 | 19.0 |
| 18 | ձեռնափայտ օգտ. | 1 | 5 | 50 | 1.8 |
| 19 | բեռնակիր սայլակ օգտ. | 2 | 2 | 168 | 22.0 |
| 20 | տենտ օգտ. | 1 | 1 | 30 | 6.8 |
| 21 | մեքենայի մասեր | 1 | 6 | 100 | 6.0 |
| 22 | մեքենայի անիվ նոր | 4 | 4 | 500 | 50.0 |
| | | 867 | | 216,378 | 10640.8 |

Հայաստանյան մասնաճյուղ
Armenian branch
00130776

"Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ." ԲԿ կողմից հատկացվող ապրանքներ կազմակերպություններին

ք.Գավառ,"Բարի Հույս "հաշմանդամ երեխաներին աջակցող ՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 3,420 | 11 արկղ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 450 | 30 հատ |
| հաշմանդամի քայլակ | 240 | 4 հատ |
| հաշմանդամի հենակ | 80 | 4 հատ |

4,190

ք.Չարենցավան "Ռեսուրս կենտրոն" ԲՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 5,350 | 15 արկղ |
| պայուսակ օգտ. | 210 | 30 հատ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 900 | 60 հատ |

6,460

ք.Սպիտակ, քաղաքապետարանի սոցիալական բաժին

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ. | 10,900 | 30 արկղ |
| պայուսակ օգտ, | 580 | 73 հատ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 1890 | 126 հատ |

13,370

Ք.Գորիս 'Գործընկերություն և ուսուցում' ՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 900 | 60 հատ |
| հագուստ օգտ. | 6,370 | 16 արկղ |
| պայուսակ օգտ, | 210 | 30 հատ |

7,480

Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի Սոցիալ-Կրթական կենտրոն ք.Գյումրի

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. | 1,790 | 8 արկղ |
| կտորներ(լոսկուտներ) | 820 | 219 հատ |
| հագուստ օգտ. | 19,065 | 50 արկղ |
| պայուսակ օգտ, | 1,145 | 170 հատ |
| սեղանի փոքր սփռոց | 400 | 1,011 |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 1,800 | 120 հատ |
| գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 249 | 136 հատ |

25,269

ք.Երևան "Փրկություն" հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ. | 3,715 | 10 արկղ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 900 | 60 հատ |

4,615

Խարբերդի հատուկ դպրոց ՊՈԱԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հաշմանդամի հենակ | 80 | 4 հատ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 900 | 60 հատ |
| հաշմանդամի սայլակ | 250 | 1 հատ |
| հաշմանդամի քայլակ | 440 | 8 հատ |
| տակդիր մեծահասակների | 3,530 | 4755 հատ |

5,200

Գ.Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ. | 55,195 | 135 արկղ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 6,390 | 426 հատ |
| անկողնու պարագա օգտ. - | 2,660 | 10 արկղ |
| մեքենայի մասեր | 100 | 6 հատ |
| մեքենայի անիվ նոր | 500 | 4 հատ |

64,845

"Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ." ԲԿ Հայաստանյան մասնաճյուղ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. - | 4,950 | 15 արկղ |
| կտորեղեն(լոսկուտներ) նոր | 600 | 1205 հատ |
| դահուկների կոմպլեկտ օգտ | 300 | 2 հատ |
| սնոուբորդ | 40 | 2 հատ |
| հողաթափեր նոր | 432 | 48 զույգ |
| կոշիկներ նոր(զույգ) | 375 | 55 զույգ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 5,850 | 390 հատ |
| գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 100 | 200 հատ |
| բարձեր սինտետիկ նոր | 1,200 | 120 հատ |
| հագուստ օգտ | 29,468 | 77 արկղ |
| ձեռնափայտ օգտ. | 50 | 5 հատ |
| մանկական սայլակ | 35 | 1 հատ |
| բեռնակիր սայլակ օգտ. | 165 | 2 հատ |
| պայուսակ օգտ. | 790 | 110 հատ |
| սեղանի փոքր սփռոց նոր | 800 | 1831 հատ |
| հաշմանդամի քայլակ օգտ. | 60 | 1 հատ |
| տենտ օգտ. | 30 | 1 հատ |
| տակդիր | 5,039 | 7025 հատ |

50,284

Հայաստանյան մասնաճյուղ Armenian branch 00130776

Հայաստանյան մասնաճյուղ Armenian branch 00130776

Երեխաների աջակցության հիմնադրամ ՀԿ ք.Հրազդան

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 900 | 60 հատ |
| հագուստ օգտ. | 5,380 | 15 արկղ |
| հաշվանդամի հենակ | 60 | 3 հատ |
| պայուսակ օգտ. | 210 | 30 հատ |
| | 6,550 | |

"Տիրամայր Հայաստանի կուսաստան" ք.Գյումրի

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 4,500 | 300 հատ |
| հողաթափեր նոր (զույգ) | 1,320 | 132 հատ |
| գրքեր մանկական էնցիկլոպեդիա օգտ.. | 130 | 34 հատ |
| | 5,950 | |

"Լիարժեք Կյանք" ԲՀԿ ք.Ստեփանավան

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 4,345 | 12 արկղ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 900 | 60 հատ |
| | 5,245 | |

ՀԱԼԵՊ ՀԲՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. - | 2370 | 10 արկղ |
| հագուստ օգտ | 4120 | 11 արկղ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 1,800 | 120 հատ |
| | 8290 | |

ԱՍ ՀԿ Արմավիր մրզ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 7730 | 20 արկղ |
| կանացի տրիկոտաժե շապիկներ նոր | 900 | 60 հատ |
| | 8630 | |

Հայաստանյան մասնաճյուղ Armenian branch 00130776 CHILDREN NOW INK CHARITY ORGANIZATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**17 փետրվարի 2017 թվականի N Մ-105-Ա**

**քաղ. Երևան**

**«ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (SOAR) - ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 14-ի N 01.1/80-2/2275-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի փետրվարի 17-ի N ԱԱՄ/ԱնՄ-2-1/1597-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի փետրվարի 14-ի N 06/3-8/4351-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրեզնոյի հայ ~~համայնքի կողմից~~ «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի (181 ուսապարկ գրենական և այլ պիտույքներով, ցանկը կցվում է, 320 կգ ընդհանուր քաշով, 4,000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 200 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, Զվարթնոց մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի և Շիրակի մարզպետարաններ:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

SOAR

<<Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն>> (SOAR) հիմնադրամ
Ք. Երևան, Քանաքեռ –Զեյթուն Թբիլիսյան խճ. 19
հեռ: 098 23 25 18

## Բաշխման ցուցակ

1. «Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» ԲՀԿ(23)
2. Գյումրիի «Տիրամայր Հայաստանի Կենտրոն» (36)
3. Իջևանի ՍՕՍ մանկական Գյուղ (30)
4. «Գյումրու Երեխաների Տուն» ՊՈԱԿ (23)
5. «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ (69)

**Ուղեբեռի Նկարագիր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ուսապարկ | 181 |
| 2 | Հուշատետր | 90 |
| 3 | Կպչուն թղթեր | 19 |
| 4 | Նկարչական տետրեր | 91 |
| 5 | Տուփով մատիտներ | 91 |
| 6 | Մատիտ | 360 |
| 7 | Գրիչ | 180 |
| 8 | Ատամի խոզանակ | 362 |
| 9 | Ատամի մածուկ | 362 |
| 10 | Գիշերազգեստ | 181 |
| 11 | Սվիտեր | 80 |
| 12 | Զուգագուլպա | 200 |
| 13 | Գլխարկ | 181 |
| 14 | Շարֆ | 65 |
| 15 | Ձեռնոց | 48 |
| 16 | Վերնաշապիկ | 342 |
| 17 | Շալվար | 45 |
| 18 | Խաղալիք | 50 |
| 19 | Գրչաման | 25 |
| 20 | Ռետին | 255 |
| 21 | Ցատկապարան | 15 |
| 22 | Պազլ /գլուխկոտրուկ | 20 |
| 23 | Պլաստիլին | 18 |
| 24 | Դեզոդորանտ | 10 |
| 25 | Սկրատ | 2 |
| 26 | Փաթեթավորված նուշ | 200 |
| 27 | Վզնոց | 3 |
| 28 | Մազերի խոզանակ / Սանր | 12 |
| 29 | Սոսինձ | 20 |
| 30 | CD /ձայնասկավառակ | 5 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 106 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-857-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 14-ի N 01.1/80-2/2274-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի փետրվարի 10-ի N 06/3-8/4097-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2015» ծրագրի մասին» N Մ-857-Ա որոշմամբ (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1205-Ա և 2016 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-997-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վերսուս Ստուդիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00842355) 2017 թվականի փետրվարի 1-ին կնքված N Ծ-02/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իրենց կողմից պատրաստած «Ձեռք-ձեռքի» հաղորդաշարի 9 թողարկում, յուրաքանչյուրը մինչև 15 րոպե տևողությամբ՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Թերմոկոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01255864) 2017 թվականի փետրվարի 2-ին կնքված՝ N Ծ-05/2017 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է կազմակերպության Երևան քաղաքի Նորքի այգիներ 180 հասցեում գտնվող կլինիկայի շենքում մանկական ատամնաբուժական նոր՝ երկու սենյակների մոնտաժային աշխատանքների իրականացում՝ 971,155 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի,

2) «Եվրոստան-Ռիյուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01537756) 2017 թվականի փետրվարի 7-ին կնքված՝ N Ծ-04/2017 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է կազմակերպության Երևան քաղաքի Նորքի այգիներ 180 հասցեում գտնվող կլինիկայի շենքում ատամնաբուժական կաբինետի վերակառուցման համար մետաղապլաստե դռնով վիտրաժի և միջնորմի մատակարարում և տեղադրում ՝ 336,251 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 փետրվարի 2017 թվականի N Մ-130- Ա**
**քաղ. Երևան**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի փետրվարի 17-ին)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբու-ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 17-ի N 01.1/80-2/2506-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի փետրվարի 20-ի N ՎՀ/22.2/1882-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 16-ի N 06/3-8/4757-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից՝ «Natus Medical incorporated» կազմակերպության միջոցով ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (Ret Cam (ցանցաթաղանթային խցիկ) ակնաբուժական սարքավորման մաս՝ 130 աստիճան ԱՌ ոսպնյակ՝ 1 տեղ, 0.5 կգ, 7,330 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**17 փետրվարի 2017 թվականի N Մ-131-Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-330-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 01.1/80-2/2492-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 14-ի N 6/3-8/4561-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 01557357) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են 2012 թվականի ապրիլի 13-ի «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-330-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1193-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Մուսալեռ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2015 թվականի փետրվարի 27-ին կնքված՝ N 820243 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 950,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Արմավիրի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N 083021510417 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,720,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հյուսիս-արևմտյան մասնաճյուղի «Էջմիածին» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2016 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 151027630 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների իրականացում՝ 240,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 132 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 13-ի N 01.1/80-2/2134-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 13-ի N 06/3-8/4114-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Սինգապուրի Հանրապետությանից անհատ բարերար Աշոտ Թունյանի կողմից, արևային ջրատաքացուցիչների կայանի համար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված արևային վահանակների (մեկ տեղ, 2,324.16 կգ ընդհանուր քաշով, 8,215.83 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 850 ԱՄՆ-ի դոլոր, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 133 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 13-ի N 01.1/80-2/2133-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 14-ի N 06/3-8/4340-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանի ժողովրդավարական Հանրապետությունից անհատ բարերար Հայկ Դիդիզյանի կողմից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված գրանիտի, մարմարի և գրքերի (16 տեղ, 22,458 կգ ընդհանուր քաշով, 12,807 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Գարեգին Ա» կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2017 թվականի N Մ-134-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՒՋԱՆ ԳՅՈՒՂԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 8-ի N 01.1/80-2/1838-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի փետրվարի 9-ի N ՎՀ/22.2/1345-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 7-ի N 06/3-8/3609-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել հոլանդական «Global Aid Network» բարեգործական (ոչ առևտրային) կազմակերպության միջոցներով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցի հասցեով ուղարկված բեռի (9,320 կգ ընդհանուր քաշով, 2,720 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 3,460 եվրո, «Արարատյան» ՍՏ, բեռի բաշխման ցանկը կցվում է) ներմուծման և անհատույց բախշման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*ՈՒՋԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ 10.01.2017թ. ՍՏԱՑՎԱԾ*

*Բեռի բաշխման ցանկ*

| N | Դպրոցներ | աշ.սեղան/հատ/օգտ. | աշ.աթոռ/հատ/օգտ. | մահճակալ/հատ/օգտ. | ներքնակ/հատ/օգտ. | հագուստ/հատ/օգտ. | ֆուտբոլի զնդակ/արկղ/օգտ. | բալլակ/հատ/օգտ. | գրասեղան/հատ/օգտ. | գրասեղանի աթոռ/հատ/օգտ. | փոքր պահարան/հատ/օգտ. | աթոռ/հատ/օգտ. | հաշմանդամի սայլակ/արկղ/օգտ. | բարձր սեղան/հատ/օգտ. | ցածր սեղան/հատ/օգտ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ուջանի միջն.դպրոց | 45 | 45 | | | 160 | 2 | | 2 | 2 | 2 | 6 | | 3 | 3 |
| 2. | Ուջանի երաժշտական դպրոց | 10 | 10 | | | | | | | | | | | 1 | |
| 3. | Ուջանի ,,ՀՈՎԻՏ,, մանկապարտեզ | | | | | | | | | | | | | 2 | 4 |
| 4. | Ուջան համայնք | | | | 12 | 200 | | 2 | | | | | 1 | | |
| 5. | Ուջանի գյուղապետարան | | | | | | | | 2 | | 1 | 4 | | 4 | |
| 6. | Ուջանի մշակույթի տուն | | | | | | | | 1 | | | | | 4 | |
| 7. | Կենտրոնական հոսպիտալ | | | 2 | 2 | | | | | | | | | | |
| 8. | Աշտարակի հիվանդանոց | | | 1 | 1 | | | | | | | | | | |
| 9. | Աշնակի մ/դ | 15 | 15 | | | | | | | | | | | 1 | 2 |
| 10. | Ապարանի թիվ 2 դպրոց | 20 | 20 | | | | | | | | | | | 1 | 2 |
| 11. | Նոր Ամանոսի մ/դ | 15 | 15 | | | | | | | | | | | 1 | 2 |
| | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | |
| | **Ընդհանուրը** | **105** | **105** | **3** | **15** | **360** | **2** | **2** | [illegible] | **2** | **3** | **10** | **1** | **17** | **13** |

Միավոր ապրանքի արժեքը նշել չենք կարող, քանի որ ողջ տեսականին գնահատված է ընդհանուր արժեքով,որը կազմում է 2.720 եվրո, 9320 կգ համար:
Ընդհանուր ծախսերը կազմում է 3.460 եվրո:

Ուջանի մ/դ տնօրեն Ա.Հարությունյան

2/5,13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ- 135 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 13-ի N 01.1/80-2/2130-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 10-ի N 06/3-8/4092-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված արևային մարտկոցները և լուսային դիոդները (848.36 կգ ընդհանուր քաշով, 530,859.81 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՄԻԱԲԳԱՀ　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 136 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 10-ի N 01.1/80-2/1985-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի փետրվարի 13-ի N 02/14/1996-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 9-ի N 06/3-8/3788-17 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2017 թվականի փետրվարի 10-ի N 01/21.1/509-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամի (Հայաստանի Հանարպետություն Տավուշի մարզ, քաղ. Դիլիջան, Գետափնյան 7, ՀՎՀՀ 07618624) կողմից իրականացվող՝ 2,400,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Դիլիջան համայնքում եկեղեցական համալիրի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների



մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**
**Հոգաբարձուների խորհրդի 27.01.2017 թվականի**
**թիվ 01-17 որոշմամբ**

ՏՆՕՐԵՆ ________ Ա. ԴԱՎԹՅԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1 | **Ծրագրի նպատակ** | Դիլիջան համայնքում Հայ առաքելական եկեղեցու կառուցում և առաջին փուլի մեկնարկ |
| 2 | **Ծրագիրը բարեգործական որակելու նպատակ** | Հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ստանալը |
| 3 | **Բարեգործներ** | Սույն ծրագիրը հիմնականում ֆինանսավորվում է նվիրատվություն և նվիրաբերություն կատարողների կողմից, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝<br>**Ռուբեն Վարդանյան և Վերոնիկա Զոնաբենդ, ՌՎՎԶ հիմնադրամ**<br>**«Աղիբեկյան ֆեմիլի ֆաունդեյշն ֆոր ըդվենսմենթ (ԱՖՖԱ) ա.ս.բ.լ.»** ոչ առևտրային կազմակերպություն, **Գագիկ Աղիբեկյան**<br>**ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ հիմնադրամ**<br>**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Բարեգործական Հիմնադրամ**<br>**Դիլիջան համայնք**<br>**Մաքսիմ Աթայանց** |
| 4 | **Ծրագիրը կատարող** | Սույն ծրագիրն իրականացվում է ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ հիմնադրամի կողմից:<br>Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Դիլիջան 3903, Գետափնյա 7<br>Պետ. ռեգիստրի վկայական՝ 03Ա1031574, գրանցման թիվ՝ 222.160.881574<br>ՀՎՀՀ 07618624<br>Գործունեության իրականացման հասցե՝ ՀՀ, ք. Դիլիջան 3901, Մյասնիկյան 63 |
| 5 | **Ծրագրի իրականացման վայր և բնագավառ** | Ծրագիրն իրականացման վայրն է՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային բնակավայրի Գետափնյա փողոց 3/2 և 3/11: Բարեգործական ծրագրի բնագավառն է՝ հոգևոր-դաստիարակչական: |
| 6 | **Ծրագրի բյուջե** | Բարեգործական ծրագրի նպատակների իրականացման համար 2017թ" մարտի 1-ից-2020թ. դեկտեմբերի 31-ը, եկեղեցու կառուցման համար անհրաժեշտ ֆինանսավորումը կազմում է 2,400,000,000 ՀՀ դրամ:<br>Ծրագրի իրականացումը բաժանվել է 3 հիմնական փուլերի, այն է՝<br>1. Նախագծային, նախապատրաստական և հիմնային աշխատանքների իրականացում<br>2. Ընդհանուր շինարարական աշխատանքների իրականացում,<br>3. Հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքներ: |
| 7 | **Բարեգործություն ստացող** | Տավուշի թեմ, Դիլիջան համայնք, զբոսաշրջիկներ, այցելուներ: |
| 8 | **Ծրագրի իրականացման տևողություն** | Ծրագիրն իրականացվելու է 2017թ, մարտի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9 | **Միջոցառումների նկարագրություն և ժամկետներ, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալ** | Ծրագիրն իրականացվում է 3 փուլերով:<br>Ծրագրով նախատեսված ժամանակաշրջանում կատարվելու են հետևյալ միջոցառումները՝<br>1. Փուլ 1 Նախագծային, նախապատրաստական և հիմնային աշխատանքների իրականացում 01/03/2017թ" մինչև 31/12/2017թ": |

| # | Միջոցառման նկարագրությունը | Ֆինանսական միջոցների ծավալը (հազ. ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Էսքիզային նախագծի մշակում, Ինժեներական հետազոտություններ, Աշխատանքային նախագծի մշակում, փորձաքննությունների, կազմակերպում, հաստատում և կազմակերպչական այլ աշխատանքներ | 200,000,000 |

| | | |
|---|---|---|
| 2 | Պայմանագրերի կնքում կապալառուի և ծառայություններ մատուցող այլ անձանց հետ | 110,000,000 |
| 3 | Շինարարական նյութերի ձեռքբերում | 120,000,000 |
| 4 | Չնախատեսված այլ ծախսեր | 20,000,000 |
| | **Ընդամենը** | **450,000,000** |

Փուլ 2 Ընդհանուր շինարարական աշխատանքների իրականացում 01/04/2017թ մինչև 30/06/2020թ":

| # | **Միջոցառման նկարագրությունը** | **Ֆինանսական միջոցների ծավալը** (հազ. ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Պայմանագրերի կնքում կապալառուի և ծառայություններ մատուցող անձանց հետ | 400,000,000 |
| 2. | Շինարարական նյութերի ձեռքբերում ներքին շուկայից | 1,000,000,000 |
| 3. | Շինարարական նյութերի, ապրանքների և ծառայությունների ներմուծում | 200,000,000 |
| 4. | Չնախատեսված այլ ծախսեր | 50,000,000 |
| | **Ընդամենը** | 1,650,000,000 |

Փուլ 3 Ներքին հարդարման և տարածքի բարեկարգման աշխատանքներ, ժամկետ՝ 01/01/2018թ մինչև 31/12/2020թ":

| # | **Միջոցառման նկարագրությունը** | **Ֆինանսական միջոցների ծավալը** (հազ. ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Լանդշաֆտային նախագծի մշակման, հաստատման և կազմակերպչական աշխատանքներ | 20,000,000 |
| 2. | Պայմանագրերի կնքում կապալառուի և ծառայություններ մատուցող անձանց հետ | 50,000,000 |
| 3. | Շինարարական նյութերի ձեռքբերում | 120,000,000 |
| 4. | Շինարարական նյութերի, ապրանքների և ծառայությունների ներմուծում | 50,000,000 |
| 5. | Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ուսումնասիրություն, ձևավորում | 30,000,000 |
| 6. | Չնախատեսված այլ ծախսեր | 30,000,000 |
| | **Ընդամենը** | 300,000,000 |

| 10 | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիր, ծավալներ և նախատեսվող գին** | |
|---|---|---|

| # | **Ծառայության անվանումը** | **Նախատեսված գումարը** (հազ. ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Էլեկտրաէներգիա | 10,000,000 |
| 2. | Ջուր և կոյուղի | 2,000,000 |
| 3. | Բենզինի, դիզելային վառելիքի ձեռքբերում | 50,000,000 |
| 4. | Բեռների ներմուծում | 250,000,000 |
| 5. | Պայմանագրեր կապալառուների, ծառայություններ մատուցող անձանց հետ | 760,000,000 |

| | | |
|---|---|---|
| 6. | Շինանյութի ծեռքբերում (տվյալ գործարքի շրջանակներում ակնկալվում է հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների վճարումից ազատում) | 1,198,000,000 |
| 7. | Խորհրդատվություն, Աուդիտ Եկեղեցու շինարարության համար | 60,000,000 |
| 8. | Չնախատեսված ծախսեր | 50,000,000 |
| | **Ընդամենը** | **2,380,000,000** |

| | | |
|---|---|---|
| 11 | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր** | (see table below) |

| # | Ծախսի անվանում | Նախատեսված գումարը (հազ. ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Բենզինի, դիզելային վառելիքի ծեռքբերում | 4,000,000 |
| 2. | Աշխատավարձ, գործուղում | 20,000,000 |
| 3. | Խորհրդատվության և Աուդիտի ծախսեր գրասենյակի պահպանման համար | 30,000,000 |
| 4. | Գրասենյակի վարձակալություն, Կոմունալ և այլ ծախսեր | 10,000,000 |
| | **Ընդամենը** | **64,000,000** |

| | | |
|---|---|---|
| 12 | **Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Սույն ծրագրի իրականացման նպատակով ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ հիմնադրամը համագործակցում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, Տավուշի մարզպետարանի, Դիլիջան համայնքի , այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13 | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն** | Սույն ծրագրի իրականացման վերահսկողությունն իրականացնելու է ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ Հիմնադրամը:<br>Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչպես նաև այլ շահագրգիռ մարմիններին:<br>Հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: |

**Տնօրեն՝** **Արթուր Դավթյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 137 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՍՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ-ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴՈՒ ՄԵՆԱԿ ՉԵՍ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 14-ի N 01.1/80-2/2276-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի փետրվարի 14-ի N ՎՀ/22.2/1589-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի փետրվարի 17-ի N ԱՍՄ/ԱՍՄ-2-1/1591-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 20-ի N 06/3-8/5170-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Բարեգործական որակել «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Անտառավան 5-րդ թաղամաս 58/2, ՀՎՀՀ՝ 05543573) կողմից իրականացվող՝ 367,294.70 ավստրալիական դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Դու մենակ չես» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ավստրալիայից «ARMENIA CHRISTIAN MISSION» ACM -ի կողմից, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի հասցեով ստացված բեռի (9,570 կգ ընդհանուր քաշով, 367,294.70 ավտրալիական դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,461.83 ավստարալիական դոլար և 531,470 դրամ, բեռի և բաշխման ցանկերը կցվում են «Շիրակի» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու, Արմավիրի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

***«ԱՍՄ»բարեգործական-մարդասիրական հիմնադրամ***
***Մարտին Հարությունյանի կողմից***
***«16» փետրվար 2017թ.***

### «ԴՈՒ ՄԵՆԱԿ ՉԵՍ» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | *Ծրագրի նպատակը* | Աջակցել ՀՀ-ում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին, սիրիահայ ընտանիքներին, հաշմանդամներին, միայնակ ծերերին: Կազմակերպել միջոցառումներ տարբեր տոնական օրերին: |
| 2. | *Ծրագրի բարեգործական որակման նպատակը* | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | *Բարեգործը* | Ավստրալիայի «Արմինյան Քրիշչըն Միշըն Ինքորփորեյթիդ» մարդասիրական կազմակերպությունը: Հասցե՝ 1593 Chatswood NSW 2057 Australia, գրանցման համար՝ 1600675: |
| 4. | *Ծրագիրը կատարողը* | «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ, ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անտառավան 5-րդ թաղամաս, 58/2, ՀՎՀՀ՝ 05543573 |
| 5. | *Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը* | Ծրագիրը առնչվում է սոցիալական ոլորտին և ընդգրկում է Երևան քաղաքը, Շիրակի մարզը, Լոռու մարզը, Արարատի մարզը, Արմավիրի մարզը, Տավուշի մարզը: «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամում գրանցված շահառուներին, մեր կողմից կազմակերպվող միջոցառումներին, ինչպես նաև ծրագրին կցված բաշխման ցանկում նշված սոցիալական պետական ծառայություններին և կազմակերպություններին անհատույց բեռների բաշխում: |
| 6. | *Ծրագրի բյուջեն* | Ծրագրի բյուջեն 2017թ. փետրվարի 3-ից 2017թ. դեկտեմբերի 29-ը կազմում է 367,294.70 ավստրալիական դոլարին համարժեք դրամ: Ծրագիրը ֆինանսավորվում է Ավստրալիայի «Արմինյան Քրիշչըն Միշըն Ինքորփորեյթիդ» մարդասիրական կազմակերպության կողմից: |
| 7. | *Բարեգործություն ստացողը* | Բարեգործություն ստացողներն են՝ Երևան քաղաքի (մոտ 430), Շիրակի |

| | | |
|---|---|---|
| | | մարզի (մոտ 100), Լոռու մարզի (մոտ 70), Արարատի մարզի (մոտ 50), Արմավիրի մարզի (մոտ 50), Տավուշի մարզի (մոտ 87) սոցիալապես անապահով ընտանիքները, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի շահառուները (մոտ 70), սիրիահայ ընտանիքները, հաշմանդամները, միայնակ ծերերը, մեր կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակից երեխաները (մոտ 256), նաև ՀՀ Առողջապահության նախարարությունը, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,: |
| 8. | *Ծրագրի իրականացման փևողությունը* | 2017թ.-ի փետրվարի 3-ից 2017 թ.-ի դեկտեմբերի 29-ը: |
| 9. | *Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը* | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. 77 արկղ՝ 30,701.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, Առողջապահության նախարարություն. 26 հատ՝ 3,920.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան. 72 արկղ՝ 28,102.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ: ***(2017 թվականի մայիսի 1-12-ը)***<br>ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին. 48 արկղ՝ 18,699.00 ավտրալիական դոլարին համարժեք դրամ: ***(2017 թվականի մայիսի 15-26-ը)***<br>ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ. 39 արկղ՝ 17,395.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ. 81 արկղ՝ 36,838.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ. 427 արկղ՝ 189,988.70 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>***Միջոցառումներ՝***<br>1. ***2017թվականի ապրիլի 3-ից ապրիլի 14-ը***<br>***«Հայրենիքի ապագան՝ Հայ Մանուկ»***-նախատեսվում է Լոռու մարզի երկու ծննդատան երեխաների ողջունում (նորածնի հագուստ՝ նոր): Ծննդատունը կընտրվի ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ համատեղ:<br>2. ***2017 թվականի մայիսի 29-ից հունիսի 2-ը*** |

| | | |
|---|---|---|
| | | 2. ***2017 թվականի մայիսի 29-ից հունիսի 2-ը***<br>***«Ուրախ երեխա»***-նախատեսվում է Տավուշի մարզի մեկ մանկապարտեզի երկու խմբի (մոտ 56 երեխա) երեխաների համար (հագուստ՝ նոր, փափուկ խաղալիք՝ նոր): Մանկապարտեզը կընտրվի Տավուշի մարզի մարզպետարանի հետ համատեղ:<br>3. ***2017 թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 8-ը***<br>***«Դեպի Դպրոց»***-նախատեսվում է Արարատի մարզի մեկ դպրոցի երկու դասարանի (մոտ 50 երեխա) երեխաների համար (հագուստ՝ նոր, գրենական պիտույքներ՝ նոր): Դպրոցը կընտրվի ՀՀ, Արարատի մարզի մարզպետարանի հետ համատեղ:<br>4. ***2017թվականի դեկտեմբերի 18-29-ը***<br>***«Ամանորյա Հեքիաթ»***-նախատեսվում է Շիրակի մարզի մեկ դպրոցի՝ մեկ դասարանի (մոտ 30 երեխա) և մեկ մանկապարտեզի երկու խմբի (40 երեխա) երեխաների համար (հագուստ՝ նոր, գործված ծածկոց՝ նոր): Դպրոցը և մանկապարտեզը կընտրվի ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարանի հետ համատեղ:<br>***Միջոցառումների ժամանակ ապրանքները բաշխվելու են «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի 2017թվականի փետրվարի 3-ին ներկրված բեռի ապրանքներից:***<br>ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք, Հովք բնակավայր. 66 արկղ՝ 29,261.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, Նորքի տուն ինտերնատ. 33 արկղ՝ 6,820.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>ՀՀ, «Սատար» Հաշմանդամների Հ/Կ. 30 արկղ՝ 3,370.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ:<br>«Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ. 10 արկղ՝ 2,200.00 ավստրալիական դոլարին համարժեք դրամ: |
| 10. | *Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը* | Նախատեսված է բարերարի կողմից բեռի ներմուծում և անհատույց բաշխում՝ 2017թվական՝ 367,294.70 ավստրալիական դոլարին համարժեք դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | ***Ներմուծում՝***<br>• հագուստ, անկողնային պարագա, նորածնի հագուստ՝ 292541 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 11692.5 ֆունտ,<br>• գործված ծածկոց՝ 37250 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 3998.40 ֆունտ,<br>• կոշիկ, պայուսակ՝ 6565 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 455.36 ֆունտ,<br>• գույք՝ 12975 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 4146.93 ֆունտ,<br>• խոհանոցային պարագա՝ 1802.5 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 307.65 ֆունտ,<br>• խաղալիք, գրենական պիտույք՝ 13463.2 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 355.28 ֆունտ,<br>• հիգիենայի պարագ՝ 2395 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 51.49 ֆունտ,<br>• գորգ, թել՝ 483 ավստրալիական դոլարին համարժեք դրամ, 90.39 ֆունտ: |
| *11.* | *Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը* | Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում, ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի սահմաններում: |
| *12.* | *Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ* | Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է՝ ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ, Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ՀՀ, Առողջապահության նախարարության, ինչպես նաև ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարանի, ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ-ի, ՀՀ, ք. Երևան, Հայաստանի Մանկապատանեկան Մշակութային Հիմնադրամի, ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք, Հովք բնակավայրի, ՀՀ, Նորքի տուն ինտերնատի, ՀՀ, Արարատի մարզի, ՀՀ, «Սատար» Հաշմանդամների Հ/Կ-ի, «Արմենիա» «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հետ: |
| *13.* | *Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը* | Ծրագրի իրականացման արդյունավետության նկատմամբ վերահսկողություն կիրականացվի Ավստրալիայի «Արմինյան Քրիշչըն Միշըն Ինքորփորեյթիդ» մարդասիրական կազմակերպության կողմից:<br>Կառավարության գործունեության վերաբերյալ սահմանված կարգով տեղեկատըվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ, ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անտառավան 5-րդ թաղամաս, 58/2, ՀՎՀՀ՝05543573

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն՝ Մարտուն Հարությունյան ________ /ստորագրություն/

Կ.Տ.

Փաթեթանյութի ցանկը/գնահատված ցանկը
Մատակարարող: Armenian Christian Mission (ACM) Australia
Founding Director Harry Hratsh Kiujian
P.O. Box 1593 Chatswood NSW 2057 Australia
SUTTON BRIDGE, SPALDING, PE11 9UY (UK)

Ապրանք ստացող՝ «ԱՍՄ» բարեգործական-մարդասիական հիմնադրամ
Ք. Գյումրի, Անտառավան 5-րդ թղմ. 58/2,
ՀՎՀՀ 05543573
Մարտուն Հարությունյան
041 36-03-54
Կոնտեյների համարը՝ ECMU 953563

| N | Քանակը | Պարունակություն | Բացատրություն | Արժեքը (AUD) | Քաշը (Ֆունտ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 4 | Պայուսակ՝ նոր /103 հատ/ | արկղ | $1,690.00 | 81.9 |
| 2 | 5 | Պայուսակ՝ օգտագործած | արկղ | $1,439.00 | 204.81 |
| 3 | 39 | Անկողնային պարագա՝ նոր /սավան, կտոր, սրբիչ, բարձ, վերմակ/ /787 հատ/ | արկղ | $13,444.00 | 917.9 |
| 4 | 34 | Անկողնային պարագա՝ օգտագործած /սավան, կտոր, սրբիչ, բարձ, վերմակ/ | արկղ | $5,262.50 | 723.58 |
| 5 | 149 | Գործված ծածկոց՝ նոր /1490 հատ/ | արկղ | $37,250.00 | 3998.72 |
| 6 | 277 | Հագուստ՝ նոր /10491 հատ/ | արկղ | $190,091.00 | 4741.79 |
| 7 | 198 | Հագուստ՝ օգտագործած | արկղ | $69,637.00 | 4953.78 |
| 8 | 36 | Նորածնի հագուստ՝ նոր /1794 հատ/ | արկղ | $14,106.50 | 355.45 |
| 9 | 7 | Կոշիկ՝ նոր /մանկական,կնոջ,տղամարդու/ /208 զույգ/ | արկղ | $3,436.00 | 168.65 |
| 10 | 6 | Խաղալիք՝ նոր /264 հատ/ | արկղ | $1,277.00 | 80.57 |
| 11 | 15 | Գրենական պիտույք՝ նոր /2501 հատ/ | արկղ | $12,186.20 | 274.71 |
| 12 | 5 | Հիգիենայի պարագա՝ նոր /885 հատ/ | արկղ | $2,395.00 | 51.49 |
| 13 | 2 | Թելեր՝ նոր /180 հատ/ | արկղ | $423.00 | 13.34 |
| 14 | 2 | Գորգ՝ օգտագործած | հատ | $60.00 | 77.05 |
| 15 | 12 | Խոհանոցային պարագա՝ նոր /383 հատ/ | արկղ | $1,304.00 | 179.35 |
| 16 | 5 | Խոհանոցային պարագա՝ օգտագործած | արկղ | $498.50 | 128.3 |
| 17 | 1 | Երեխայի խաղավայր/մանեժ՝ նոր /1հատ/ | հատ | $35.00 | 2.54 |
| 18 | 1 | Մանկական անվասայլակ՝ նոր /1հատ/ | հատ | $50.00 | 15.87 |
| 19 | 4 | Մահճակալի հիմնական մասեր/ներքնակ,գլխամաս,վերջնամաս,շրջանակ, շերտաձող/ /4 հատ/ նոր | հատ | $210.00 | 80.58 |
| 20 | 16 | Մահճակալի հիմնական մասեր՝ /ներքնակ, գլխամաս,վերջնամաս,շրջանակ,շերտաձող/ օգտագործած | հատ | $1,490.00 | 774.43 |
| 21 | 13 | Հիվանդանոցային մահճակալի գլխամաս,վերջնամաս՝ օգտագործած | հատ | $1,820.00 | 255.90 |
| 22 | 13 | Հիվանդանոցային մահճակալ՝ օգտագործած | հատ | $3,900.00 | 1738.14 |
| 23 | 19 | Հաշմանդամի սայլակ՝ օգտագործած | հատ | $2,850.00 | 663.78 |
| 24 | 2 | Հենակ՝ օգտագործած | հատ | $20.00 | 8.05 |
| 25 | 11 | Քայլակ՝ նոր /11հատ/ | հատ | $1,100.00 | 152.79 |
| 26 | 30 | Քայլակ՝ օգտագործած | հատ | $1,200.00 | 429.21 |
| 27 | 2 | Գնումների անվասայլակ՝ նոր /2հատ/ | հատ | $60.00 | 6.84 |
| 28 | 1 | Կարի մեքենա՝ նոր /1հատ/ | հատ | $60.00 | 18.74 |
| | 909 | Պարունակվում է մեկ (1) կոնտեյներում | Ապրանքի ընդհանուր քանակը | $367,294.70 | 21098 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի
տնօրեն՝ ________ Մ. Հարությունյան
/ստորագրություն/
16.02.2017

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի
տնօրեն՝ ________ Մ. Հարությունյան
/ստորագրություն/
16.02.2017

## Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Պայուսակ՝ նոր (արկղ) | | Պայուսակ՝ օգտ. (արկղ) | | Անկողնային պարագա՝ նոր (արկղ) | | Անկողնային պարագա՝ օգտ. (արկղ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 2 | ՀՀ Առողջապահության նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ Գյումրու համայնքապետարան | - | - | - | - | - | - | - | - |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխակատազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | - | - | - | - | - | - | - | - |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական ՀԿ | - | - | - | - | 6 | $800.00 | - | - |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ | 2 | $1,040.00 | - | - | 3 | $10,000.00 | 1 | $120.00 |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | 2 | $650.00 | 5 | $1,439.00 | 30 | $10,058.00 | 33 | $5,142.50 |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | - | - | - | - | - | - | - | - |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | - | - | - | - | - | - | - | - |
| 10 | «Սատար» Հաշմանդամների ՀԿ | - | - | - | - | - | - | - | - |
| 11 | «Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ | - | - | - | - | - | - | - | - |
| | Ընդհամենը | 4 | $1,690.00 | 5 | $1,439.00 | 39 | $20,858.00 | 34 | $5,262.50 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն ______ Մ. Հարությունյան

/ստորագրություն/ 15.02.2017

Կ.Տ.

## Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Գործված ծածկոց՝ նոր (արկղ) | | Հագուստ՝ նոր (արկղ) | | Հագուստ՝ օգտ. (արկղ) | | Նորածնի հագուստ՝ նոր (արկղ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 20 | $5,000.00 | 20 | $15,863.00 | 25 | $7,601.00 | 4 | $1,187.00 |
| 2 | ՀՀ Առողջապահության նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ Գյումրու համայնքապետարան | 20 | $5,000.00 | 23 | $16,101.00 | 20 | $5,581.00 | 3 | $960.00 |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխակատազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | 14 | $3,500.00 | 15 | $8,290.00 | 15 | $5,849.00 | 3 | $960.00 |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական ՀԿ | 5 | $1,250.00 | 14 | $10,676.00 | 12 | $4,109.00 | 2 | $560.00 |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային Հիմնադրամ | 19 | $4,750.00 | 30 | $19,256.00 | 11 | $4,255.00 | - | - |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | 30 | $7,500.00 | 155 | $104,804.00 | 90 | $32,742.00 | 22 | $9,879.50 |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | 15 | $3,750.00 | 20 | $15,101.00 | 25 | $9,500.00 | 2 | $560.00 |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | 23 | $5,750.00 | - | - | - | - | - | - |
| 10 | «Սատար» Հաշմանդամների ՀԿ | 3 | $750.00 | - | - | - | - | - | - |
| 11 | «Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ | - | - | - | - | - | - | - | - |
| | Ընդհամենը | 149 | $37,250.00 | 277 | $190,091.00 | 198 | $69,637.00 | 36 | $14,106.50 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն ______ Մ. Հարությունյան

/ստորագրություն/ 15.02.2017

Կ.Տ.

## Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Կոշիկ՝ նոր (արկղ) | | Խաղալիք՝ նոր (արկղ) | | Խաղալիք՝ օգտ. (արկղ) | | Գրենական պիտույք՝ նոր (արկղ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 2 | ՀՀ Առողջապահության նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ Գյումրու համայնքապետարան | - | - | - | - | - | - | - | - |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | - | - | - | - | - | - | - | - |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ | - | - | - | - | - | - | - | - |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային Հիմնադրամ | - | - | 3 | $766.00 | - | - | 5 | $2,820.00 |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | 7 | $3,436.00 | 3 | $511.00 | - | - | 10 | $9,366.00 |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | - | - | - | - | - | - | - | - |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | - | - | - | - | - | - | - | - |
| 10 | «Սատար» Հաշմանդամների Հ/Կ | - | - | - | - | - | - | - | - |
| 11 | «Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ | - | - | - | - | - | - | - | - |
| | Ընդհամենը՝ | 7 | **$3,436.00** | 6 | **$1,277.00** | 0 | $0.00 | 15 | **$12,186.00** |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն /ստորագրություն/ Ս. Հարությունյան 15.02.2017

Կ.Տ.

## Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Հիգիենայի պարագա՝ նոր (արկղ) | | Թելեր (արկղ) | | Գորգ (հատ) | | Խոհանոցային պարագա՝ նոր (արկղ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 2 | ՀՀ Առողջապահության նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան | - | - | - | - | - | - | - | - |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | - | - | - | - | - | - | - | - |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ | - | - | - | - | - | - | - | - |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ | 2 | $599.00 | 1 | $360.00 | - | - | 2 | $177.00 |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | 3 | $1,796.00 | 1 | $63.00 | 2 | $60.00 | 10 | $1,127.00 |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | - | - | - | - | - | - | - | - |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | - | - | - | - | - | - | - | - |
| 10 | «Սատար» Հաշմանդամների Հ/Կ | - | - | - | - | - | - | - | - |
| 11 | «Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ | - | | | | | | | |
| | Ընդհամենը՝ | 5 | **$2,395.00** | 2 | $423.00 | 2 | $60.00 | 12 | $1,304.00 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն /ստորագրություն/ Ս. Հարությունյան 15.02.2017

Կ.Տ.

# Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Խոհանոցայի պարագա՝ oգտ. (արկղ) | | Նորածնի օրորոց՝ oգտ. (հատ) | | Նորածնի բարձր սեղանիկ՝ oգտ. (հատ) | | Երեխայի խաղավայր/մանեժ՝ նոր (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 2 | ՀՀ Առողջապահության նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ Գյումրու համայնքապետարան | - | - | - | - | - | - | - | - |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | - | - | - | - | - | - | - | - |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ | - | - | - | - | - | - | - | - |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ | 1 | $79.00 | - | - | - | - | - | - |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | 4 | $419.50 | - | - | - | - | 1 | $35.00 |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | - | - | - | - | - | - | - | - |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | - | - | - | - | - | - | - | - |
| 10 | «Սատար» Հաշմանդամների Հ/Կ | - | - | - | - | - | - | - | - |
| 11 | «Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ | | | - | - | - | - | - | - |
| | Ընդհամենը | 5 | $498.50 | 0 | $0.00 | 0 | $0.00 | 1 | $35.00 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն _______ Մ. Հարությունյան

/ստորագրություն/

15.02.2017

# Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Երեխայի խաղավայր/մանեժ՝ oգտ. (հատ) | | Մանկական անվասայլակ՝ նոր (հատ) | | Մանկական անվասայլակ՝ oգտ. (հատ) | | Մահճակալի հիմնական մասեր /ներք.,գլխ., վերջ.,շրջ.,շերտածող նոր (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 2 | ՀՀ Առողջապահության նախարարություն | - | - | - | - | - | - | - | - |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ Գյումրու համայնքապետարան | - | - | - | - | - | - | - | - |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | - | - | - | - | - | - | - | - |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ | | | - | - | - | - | - | - |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ | - | - | - | - | - | - | - | - |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | - | - | 1 | $50.00 | - | - | 4 | $210.00 |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | - | - | - | - | - | - | - | - |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | - | - | - | - | - | - | - | - |
| 10 | «Սատար» Հաշմանդամների Հ/Կ | - | - | - | - | - | - | - | - |
| 11 | «Արմենիա» Հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ | - | - | - | - | - | - | - | - |
| | Ընդհամենը | 0 | $0.00 | 1 | $50.00 | 0 | $0.00 | 4 | $210.00 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն _______ Մ. Հարությունյան

/ստորագրություն/

15.02.2017

# Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական Հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Սահծակալի հիմնական մասեր /ներք.,գլխ., վերջ.,շրջ.,շերտածող` նոր (հատ) | | Հիվանդանոցային սահծակալի գլխ.,վերջն` օգտ. (հատ) | | Հիվանդանոցային սահծակալ` օգտ. (հատ) | | Հաշմանդամի սայլակ` օգտ. (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | - | - | - | - | 5 | $750.00 |
| 2 | ՀՀ Առողջապահության նախարարություն | | - | 8 | $1,120.00 | 8 | $2,400.00 | - | - |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ Գյումրու համայնքապետարան | - | - | - | - | - | - | 2 | $300.00 |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | - | - | - | - | - | - | - | - |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, ք. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ | - | - | - | - | - | - | - | - |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ | - | - | - | - | - | - | - | - |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | 10 | $530.00 | - | - | - | - | - | - |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | - | - | - | - | - | - | 2 | $300.00 |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | - | - | - | - | - | - | 5 | $750.00 |
| 10 | «Սատար» Հաշմանդամների Հ/Կ | 6 | $960.00 | - | - | - | - | 5 | $750.00 |
| 11 | «Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ | - | - | 5 | $700.00 | 5 | $1,500.00 | - | - |
| | Ընդհամենը` | 16 | $1,490.00 | 13 | $1,820.00 | 13 | $3,900.00 | 19 | $2,850.00 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն` /ստորագրություն/ Մ. Հարությունյան 15.02.2017

Կ.Տ. ACM

# Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մրդասիրական հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Հենակ` օգտ. (հատ) | | Քայլակ` նոր (հատ) | | Քայլակ` օգտ. (հատ) | | Գնումների անվասայլակ` նոր (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - | 3 | $300.00 | - | - | - | - |
| 2 | ՀՀ Առողջապահության նախարարություն | - | - | - | - | 10 | $400.00 | - | - |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ Գյումրու համայնքապետարան | - | - | - | - | 4 | $160.00 | - | - |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | - | - | 1 | $100.00 | - | - | - | - |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ | - | - | - | - | - | - | - | - |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային Հիմնադրամ | - | - | - | - | - | - | 1 | $30.00 |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | - | - | - | - | 2 | $80.00 | 1 | $30.00 |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | 1 | $10.00 | - | - | 1 | $40.00 | - | - |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | | | 2 | $200.00 | 3 | $120.00 | - | - |
| 10 | «Սատար» Հաշմանդամների Հ/Կ | 1 | $10.00 | 5 | $500.00 | 10 | $400.00 | - | - |
| 11 | «Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ | | | - | - | - | - | - | - |
| | Ընդհամենը` | 2 | $20.00 | 11 | $1,100.00 | 30 | $1,200.00 | 2 | $60.00 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն` /ստորագրություն/ Մ. Հարությունյան 15.02.2017

Կ.Տ. ACM

# Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական Հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Կարի մեքենա՝ նոր (հատ) | |
|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | - |
| 2 | ՀՀ Առողջապահության նախարարություն | - | - |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ Գյումրու համայնքապետարան | - | - |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | - | - |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ | - | - |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային Հիմնադրամ | - | - |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | 1 | $60.00 |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | | |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | - | - |
| 10 | «Սատար» Հաշմանդամների Հ/Կ | - | - |
| 11 | «Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ | - | - |
| | Ընդհամենը՝ | 1 | $60.00 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն՝ Մ. Հարությունյան

/ստորագրություն/

15.02.2017

# Բաշխման ցանկ

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ ECMU 953563 ուղեբեռի ապրանքների

| N | Սոցիալական պետական ծառայություններ և կազմակերպություններ | Կարիքավոր քաղաքացի | Արկղ | Գումար /AUD/ |
|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | - | 77 | $ 30,701.00 |
| 2 | ՀՀ, Առողջապահության նախարարություն | - | 26 | $ 3,920.00 |
| 3 | ՀՀ, Շիրակի մարզ Գյումրու համայնքապետարան | մոտ 100 | 72 | $ 28,102.00 |
| 4 | ՀՀ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | մոտ 70 | 48 | $ 18,699.00 |
| 5 | ՀՀ,Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ «Բարի Կամք» Սոցիալական Հ/Կ | մոտ 50 | 39 | $ 17,395.00 |
| 6 | ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ (Բացօթյա ճամբար) | մոտ 200 | 81 | $ 36,838.00 |
| 7 | ՀՀ, Շիրակի մարզ, «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կարիքավորներ | մոտ 70 | 427 | $ 189,988.70 |
| 8 | ՀՀ, Տավուշի մարզ, Դիլիջանի համայնք Հովք բնակավայր | մոտ 87 | 66 | $ 29,261.00 |
| 9 | ՀՀ, Նորքի տուն ինտերնատ | մոտ 230 | 33 | $ 6,820.00 |
| 10 | «Սատար» Հաշմանդամների Հ/Կ | - | 30 | $ 3,370.00 |
| 11 | «Արմենիա» Հանրապետական Բժշկական կենտրոն ՓԲԸ | - | 10 | $ 2,200.00 |
| | Ընդհամենը | | 909 | $ 367,294.70 |

«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի տնօրեն՝ Մ. Հարությունյան

/ստորագրություն/

15.02.2017

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 փետրվարի 2017 թվականի N Մ - 138 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 01.1/80-2/2458-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 15-ի N 06/3-8/4668-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հունաստանից անհատ բարերար Աշոտ Թունյանի կողմից, արևային ջրատաքացուցիչների կայանի համար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված արևային մոդուլներ կրող կոնստրուկցիայի (26 տեղ, 30,590 կգ ընդհանուր քաշով, 59,998.69 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,223.62 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2017 թվականի N Մ - 139 - Ա
քաղ. Երևան

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 17-ի N 01.1/80-2/2499-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 17-ի N 06/3-8/4958-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով ձեռք բերված, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գույների կատալոգի (5 կգ ընդհանուր քաշով, 250 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 180 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**17 փետրվարի 2017 թվականի N Մ- 140 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 01.1/80-2/2378-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 10-ի N 06/3-8/4032-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուգլիֆտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00009839) 2017 թվականի հունվարի 10-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարդատար վերելակի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 փետրվարի 2017 թվականի N Մ - 141 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի փետրվարի 17-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Եվրոպական միության քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային գերազանցությունների կենտրոնի թիվ 52 (Հարավ Արևլյան Եվրոպայում, Ուկրաինայում, Մոլդովայում և Հարավյին Կովկասում արձագանքող ուժերի կարողությունների բարձրացում) ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հասցեով ստացված տասը խմբաքանակ գույքի (անհատական պաշտպանական միջոցներ, դոզաչափական սարքեր և ախտահանիչ միջոցների) ներմուծման ծրագիրը՝

1) Գերմանիայի դաշնային Հանրապետությունից - 1,026 կգ քաշով, 83,904 եվրո արժողությամբ.

2) Լիտվայի Հանրապետությունից – 3.60 կգ քաշով, 7,554 եվրո արժողությամբ.

3) Բելառուսի Հանրապետությունից – 100.80 կգ քաշով, 31,179.60 եվրո արժողությամբ.

4) Գերմանիայի դաշնային Հանրապետությունից – 105.50 կգ քաշով, 59,316 եվրո արժողությամբ.

5) Ֆինլանդիայի Հանրապետությունից – 63 կգ քաշով, 13,887.10 եվրո արժողությամբ.

6) Ուկրաինայի Հանրապետությունից – 15.20 կգ քաշով, 1,417.71 եվրո արժողությամբ.

7) Չեխիայի Հանրապետությունից – 4 կգ քաշով, 1,429.10 եվրո արժողությամբ.

8) Ուկրաինայի Հանրապետությունից – 15 կգ քաշով, 3,807.69 եվրո արժողությամբ.

9) Ամերիկայի Միացյալ Նահանգներից – 9.07 կգ քաշով, 1,335.18 եվրո արժողությամբ.

10) Ֆինլանդիայի Հանրապետությունից – 414 կգ քաշով, 25,440 եվրո արժողությամբ.

Բեռի ընդհանուր քաշը կազմում է 1,756.17 կգ, ընդհանուր արժեքը՝ 229,260.38 եվրո, փոխադրման ծախսերը, մաքսային ձևակերպումները կատարվելու են «Արարատյան», «Զվարթնոց», ՄՓԵԻՍԱՓԱՄ և ՄԾՓ մաքսատներում:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 փետրվարի 2017 թվականի N Մ- 142 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի փետրվարի 17-ին)
**քաղ. Երևան**

## «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 01.1/80-2/2448-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի փետրվարի 14-ի N 02/14/2121-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի փետրվարի 20-ի N 03/07-1/2034-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 15-ի N 06/3-8/4667-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի (Հայաստանի Հանարպետություն, քաղ. Երևան, Հովսեփ Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474) կողմից իրականացվող՝ 1,953,064,200 դրամ արժողությամբ «Հայ-Ռուսական համալսարանի նոր մասնաշենքի շինարարության» ծրագիրը (կցվում է):

2. «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված



ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Ռեկտոր Ա.Ռ. Դարբինյանի կողմից
«13» փետրվարի 2017թ.

# Հայ-Ռուսական համալսարանի նոր մասնաշենքի շինարարության ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝<br>• Արդի պահանջներին համապատասխան ժամանակակից գիտական ուղղությունների ու նորարարական մտքի զարգացումն ու Հայաստանում գիտական ազգային ռեսուրսի ստեղծումն ու ընդլայնումը:<br>• Հայաստանում բնագիտական ուղղությունների զարգացումը, այդ ոլորտում գիտական ներուժի մեծացումը:<br>• ՀՀ գիտության ինտեգրումը համաշխարհային գիտական և հետազոտական հանրությանը և միջազգային մակարդակում նշանակության բարձրացումը՝ ՀՌՀ և ՌԴ առաջատար գիտական կենտրոնների միջև համագործակցության միջոցով, որոնցից են Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը, «ՄԻՖԻ» միջուկային հետազոտությունների ազգային ինստիտուտը, Սանկտ-Պետերբուրգի պետական պոլիտեխնիկական համալսարանը և այլն:<br><br>Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել Հայ-Ռուսական համալսարանի նոր լաբորատոր մասնաշենքի կառուցում, տարածքի բարեկարգում և հարակից աշխատանքների իրականացում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործ | Ռուսաստանի Դաշնության Կառավարություն: |
| 4. | Ծրագրի կատարողը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական համալսարան<br>ՀՀ, քաղ. Երևան, 0051, Հովսեփ Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474 |



| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական համալսարան, ՀՀ, քաղ. Երևան 0051, Հովսեփ Էմինի 123:<br>Բնագավառը՝ բարձրագույն կրթություն և գիտություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 1 953 064,20 հազար դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները և ասպիրանտները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի տևողությունը՝ 01 հունվարի 2017թ. - 31 դեկտեմբերի 2020թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 31 ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br><br>1. Համաշինարարական աշխատանքների իրականացում:<br>Մինչև 2020թ. դեկտեմբերի 31 նախատեսվում է համաշինարարական աշխատանքների իրականացում:<br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 1 336 450.55 հազ. դրամ:<br><br>2. Ներքին ինժեներական ցանցերի անցկացում:<br>Մինչև 2018թ. դեկտեմբերի 31 նախատեսվում է իրականացնել ներքին ինժեներական ցանցերի անցկացման աշխատանքներ:<br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 117 824,42 հազ. դրամ:<br><br>3. Տեխնոլոգիական սարքավորումներ ձեռքբերում (ներմուծում):<br>Մինչև 2018թ. սեպտեմբերի 30 նախատեսվում է իրականացնել տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերում (ներմուծում):<br>Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 151 624,62 հազ. դրամ:<br><br>4. Ջեռուցման և օդափոխության համակարգի ձեռքբերում (ներմուծում): |

| | | |
|---|---|---|
| | | Մինչև 2020թ. դեկտեմբերի 31 նախատեսվում է իրականացնել ջեռուցման և օդափոխության համակարգի ձեռքբերում և տեղադրում:<br>Սարքավորումների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 246 054,56 հազ. դրամ:<br><br>5. **Հեղինակային և տեխնիկական հսկողության իրականացում:**<br>Մինչև 2020թ. դեկտեմբերի 31 նախատեսվում է իրականացնել հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայության մատուցում:<br>Ծառայության նախահաշվային արժեքը կազմում է 27 862,45 հազ. ՀՀ դրամ:<br><br>6. **Նախագծախանահաշվային աշխատանքների (ներառյալ փորձաքննության) իրականացում:**<br>Մինչև 2017թ. մարտի 31 նախատեսվում է իրականացնել նախագծախանահաշվային աշխատանքների (ներառյալ փորձաքննության) իրականացում:<br>Ծառայության նախահաշվային արժեքը կազմում է 73 247,60 հազ. ՀՀ դրամ<br>Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվել չի ակնկալվում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. **Համաշինարարական աշխատանքների իրականացում:**<br>Մինչև 2020թ. դեկտեմբերի 31 նախատեսվում է համաշինարարական աշխատանքների իրականացում: Աշխատանքները ներառում են՝<br>- լաբորատոր մասնաշենքի կառուցում (*հողային աշխատանքներ*, երկաթբետոնե աշխատանքներ, ներքին և արտաքին պատերի շար);<br>- մասնաշենքի ներքին և արտաքին հարդարման աշխատանքների իրականացում;<br>- շենքին հարող տարածքի բարեկարգում:<br><br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 1 336 450.55 հազ. դրամ:<br><br>2. **Ներքին ինժեներական ցանցերի անցկացում:** |



| | | |
|---|---|---|
| | | Մինչև 2018թ. դեկտեմբերի 31 նախատեսվում է իրականացնել ներքին ինժեներական ցանցերի անցկացման աշխատանքներ:<br>Աշխատանքները ներառում են՝<br>- լաբորատոր մասնաշենքի ջրա, ջերմա, էլեկտրամանակարարման ենթակառուցվածքների և կոյուղու անցկացում;<br>- ցածր լարման սարքավորումների տեղադրում:<br><br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 117 824,42 հազ. դրամ:<br><br>3. **Տեխնոլոգիական սարքավորումներ ձեռքբերում (ներմուծում):**<br>Մինչև 2018թ. սեպտեմբերի 30 նախատեսվում է իրականացնել տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերում (ներմուծում) և տեղադրում:<br>Նախատեսվում է խոհանոցային տեխնիկայի և սարքավորումների, գույքի ձեռքբերում (ներմուծում) և տեղադրում:<br><br>Սարքավորումների նախահաշվային արժեքը կազմում է 151 624,62 հազ. դրամ:<br><br>4. **Ջեռուցման և օդափոխության համակարգի ձեռքբերում (ներմուծում):**<br>Մինչև 2020թ. դեկտեմբերի 31 նախատեսվում է իրականացնել ջեռուցման և օդափոխության համակարգի ձեռքբերում (ներմուծում) և տեղադրում:<br>Նախատեսվում է ջեռուցման, օդափոխության, օդորակման և կառավարման համակարգերի ձեռքբերում (ներմուծում) և տեղադրում:<br><br>Սարքավորումների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 246 054,56 հազ. դրամ:<br><br>5. **Հեղինակային և տեխնիկական հսկողության իրականացում:**<br>Մինչև 2020թ. դեկտեմբերի 31 նախատեսվում է հեղինակային և տեխնիկական հսկողության իրականացում:<br>Նախատեսվում է ծրագրի ողջ ընթացքում իրականացվող բոլոր տեսակի |

| | | |
|---|---|---|
| | | աշխատանքների հեղինակային և տեխնիկական հսկողություն և որակի ապահովում:<br><br>Ծառայության նախահաշվային արժեքը կազմում է 27 862,45 հազ. ՀՀ դրամ:<br><br>6. **Նախագծախանահաշվային աշխատանքների (ներառյալ փորձաքննության) իրականացում:**<br>Մինչև 2017թ. մարտի 31 նախատեսվում է իրականացնել նախագծախանահաշվային աշխատանքների (ներառյալ փորձաքննության) իրականացում:<br>Նախատեսվում է ճարտարապետաշինարարական, ինժեներական ցանցերի, շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծի մշակում, նախահաշվի կազմում, նախագծի փորձաքննության իրականացում:<br><br>Ծառայության նախահաշվային արժեքը կազմում է 73 247,60 հազ. ՀՀ դրամ<br><br>Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվել չի ակնկալվում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարա·րությունը | Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներկայացնել ընթացիկ և վերջնական ֆինանսական հաշվետվություններ ՌԴ Կրթության և գիտության նախարարություն, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 փետրվարի 2017 թվականի N Մ- 143 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի փետրվարի 17-ին)
**քաղ. Երևան**

## «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻ ԼՈՂԱՎԱԶԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 01.1/80-2/2454-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի փետրվարի 14-ի N 02/14/2123-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի փետրվարի 20-ի N 03/07-1/2036-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 15-ի N 06/3-8/4666-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հովսեփ Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474) կողմից իրականացվող՝ 555,899,200 դրամ արժողությամբ «Հայ-Ռուսական համալսարանի մարզահամալիրի լողավազանի շինարարության ավարտի» ծրագիրը (կցվում է):

2. «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Ռեկտոր Ա.Ռ. Դարբինյանի կողմից
«13» փետրվարի 2017թ.

# Հայ-Ռուսական համալսարանի մարզահամալիրի լողավազանի շինարարության ավարտի ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝<br>• Արդի պահանջներին համապատասխան ժամանակակից լողավազանի շինարարության ավարտ:<br>• Հայաստանում սպորտի զարգացումը, առողջ ապրելակերպի գաղափարախոսության տարածումը երիտասարդության շրջանում:<br><br>Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել Հայ-Ռուսական համալսարանի մարզահամալիրի լողավազանի շինարարության ավարտ և հարակից աշխատանքների իրականացում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ռուսաստանի Դաշնության Կառավարություն: |
| 4. | Ծրագրի կատարողը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական համալսարան<br>ՀՀ, քաղ. Երևան, 0051, Հովսեփ Էմինի 123, ՀՎՀՀ՝ 00053474 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական համալսարան, ՀՀ, քաղ. Երևան 0051, Հովսեփ Էմինի 123:<br>Բնագավառը՝ բարձրագույն կրթություն և գիտություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 555 899,20 հազար դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարձրագույն մասնագիտական կրթության միջպետական ուսումնական հաստատություն Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները և ասպիրանտները: |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի տևողությունը՝ 01 հունվարի 2017թ. - 31 մայիսի 2018թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ.-ի հունվարի 1-ից մինչև 31 մայիսի 2018թ. ընկած ժամկահատվածում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br><br>1. **Համաշինարարական աշխատանքների իրականացում:**<br>Մինչև 31 մայիսի 2018թ. նախատեսվում է լողավազանի համաշինարարական աշխատանքների իրականացում:<br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 275 437.73 հազ. դրամ:<br><br>2. **Լողավանի հարդարման աշխատանքների իրականացում**<br>Մինչև 31 մայիսի 2018թ. նախատեսվում է հարդարման աշխատանքների իրականացում:<br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 5 076.04 հազ. դրամ:<br><br>3. **Ջեռուցման և օդափոխության համակարգի ձեռքբերում (ներմուծում):**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է իրականացնել ջեռուցման և օդափոխության համակարգի ձեռքբերում և տեղադրում:<br>Սարքավորումների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 115 176,08 հազ. դրամ:<br><br>4. **Ներքին ինժեներական ցանցերի անցկացում:**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է իրականացնել ներքին ինժեներական ցանցերի անցկացման աշխատանքներ:<br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 67 125,12 հազ. դրամ:<br><br>5. **Ցածր լարման ցանցերի անցկացում:**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է իրականացնել ցածր լարման ցանցերի անցկացում:<br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 31 160,27 հազ. դրամ:<br><br>6. **Գույքի և կահույքի ձեռքբերում (ներմուծում):**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է գույքի և կահույքի ձեռքբերում և |

| | | |
|---|---|---|
| | | տեղադրում:<br>Գույքի և կահույքի նախահաշվային արժեքը կազմում է 38 400,00 հազ. դրամ:<br><br>7. **Հեղինակային և տեխնիկական հսկողության իրականացում:**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է իրականացնել հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայության մատուցում:<br>Ծառայության նախահաշվային արժեքը կազմում է 8 451,24 հազ. ՀՀ դրամ:<br><br>8. **Այլ (չնախատեսված) միջոցառումների և աշխատանքների իրականացում:**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է այլ (չնախատեսված) միջոցառումների և աշխատանքների իրականացում:<br>Միջոցառումների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 15 072.72 հազ. ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. **Համաշինարարական աշխատանքների իրականացում:**<br>Մինչև 2018թ. մայիսի 31 նախատեսվում է համաշինարարական աշխատանքների իրականացում: Աշխատանքները ներառում են՝<br>- մարզահամալիրի լողավազանի շինարարության ավարտ;<br>- շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացում:<br><br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է է 275 437.73 հազ. դրամ:<br><br>2. **Լողավանի հարդարման աշխատանքների իրականացում:**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է իրականացնել լողավազանի թասակի հարդարման աշխատանքներ:<br>Աշխատանքները ներառում են լողավազանի թասակի սալիկապատում և հատուկ ջրամեկուսացման աշխատանքներ:<br><br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 5 076.04 հազ. դրամ:<br><br>3. **Ջեռուցման և օդափոխության համակարգի ձեռքբերում (ներմուծում):**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է իրականացնել ջեռուցման և |



| | | |
|---|---|---|
| | | օդափոխության համակարգի ձեռքբերում և տեղադրում<br>Նախատեսվում ջեռուցման, օդափոխության, օդորակման և կառավարման համակարգերի ձեռքբերում (ներմուծում) և տեղադրում:<br><br>Սարքավորումների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 115 176,08 հազ. դրամ:<br><br>4. **Ներքին ինժեներական ցանցերի անցկացում:**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է իրականացնել ներքին ինժեներական ցանցերի անցկացման աշխատանքներ:<br>Աշխատանքները ներառում են՝<br>- լողավազանի ջրա, ջերմա, էլեկտրամանակարարման ենթակառուցվածքների և կոյուղու անցկացում;<br>- ջրի մաքրման և վարակազրկման ենթակառուցվածքների անցկացում:<br><br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 67 125,12 հազ. դրամ:<br><br>5. **Ցածր լարման ցանցերի անցկացում:**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է իրականացնել ցածր լարման ցանցերի անցկացում:<br>Նախատեսվում է ցածր կապի և հեռահաղորդակցության, հակահրդեհային սարքավորումների (ցուցիչների և ազդանշանների) տեղադրում:<br><br>Աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 31 160,27 հազ. դրամ:<br><br>6. **Գույքի և կահույքի ձեռքբերում (ներմուծում):**<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է գույքի և կահույքի ձեռքբերում և տեղադրում:<br>Նախատեսվում է լողավազանի համար նախատեսված հանդերձարանների կահավորում և լողավազանի պարագաների ձեռքբերում:<br><br>Գույքի և կահույքի նախահաշվային արժեքը կազմում է 38 400,00 հազ. դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | 7. Հեղինակային և տեխնիկական հսկողության իրականացում:<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է իրականացնել հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայության մատուցում:<br>Նախատեսվում է ծրագրի ողջ ընթացքում իրականացվող բոլոր տեսակի աշխատանքների հեղինակային և տեխնիկական հսկողություն և որակի ապահովում:<br><br>Ծառայության նախահաշվային արժեքը կազմում է 8 451,24 հազ. ՀՀ դրամ:<br><br>8. Այլ (չնախատեսված) միջոցառումների և աշխատանքների իրականացում:<br>Մինչև 31 մայիսի 2018թ նախատեսվում է այլ (չնախատեսված) միջոցառումների և աշխատանքների իրականացում:<br>Ներառվում են նախագծանախահաշվային փաստաթղթերով չնախատեսված աշխատանքների իրականացում:<br><br>Միջոցառումների և աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 15 072.72 հազ. ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է ներկայացնել ընթացիկ և վերջնական ֆինանսական հաշվետվություններ ՌԴ Կրթության և գիտության նախարարություն, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**20 փետրվարի 2017 թվականի N Մ- 144 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի փետրվարի 17-ին)
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 10-ի N 01.1/80-2/2092-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 17-ի N 06/3-8/4952-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2017 թվականի փետրվարի 20-ի N 40 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2016 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված՝ N 3462959 և 3462977 պայմանագրերով նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2017 թվականի փետրվարի 1-ից մինչև 2018 թվականի հունվարի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցման շարժական ծառայությունների մատուցում՝ 146,484 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 փետրվարի 2017 թվականի N Մ- 145 - Ա
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի փետրվարի 17-ի նիստին)
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 17-ի N 01.1/80-2/2525-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի փետրվարի 20-ի N ՎՀ/22.2/1879-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 17-ի N 06/3-8/5101-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (լաբորատոր ագդանյութեր՝ 1 տեղ, 5.3 կգ ընդհանուր քաշով, 1,730 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 114.89 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**22 փետրվարի 2017 թվականի N Մ- 146 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի փետրվարի 17-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվարի 17-ի N 01.1/80-2/2520-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի փետրվարի 22-ի N ՎՀ/22.2/1967-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի փետրվարի 17-ի N 06/3-8/4919-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (լաբորատոր սարքեր և պլաստիկե ծայրակալներ՝ 1 տեղ, 58 կգ ընդհանուր քաշով, 2,235.82 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 808.46 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**22 փետրվարի 2017 թվականի N Մ - 147 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի փետրվարի 17-ի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է**.*

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի հանձնախմբի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված գյուղապրանքի վերամշակման համար նախատեսված սարքավորումների (103,308.65 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5,485.00 եվրո, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

Բեռը անհատույց հանձնվելու է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ստեղծված «Հիմնատավուշ» հիմնադրամին՝ իր ծրագրերում օգտագործելու համար:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 փետրվարի 2017 թվականի N Մ-148-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1211-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի փետրվարի 17-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ծածկոցները (69 տեղ, 1,932 կգ ընդհանուր քաշով, 13,880.48 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,112 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1211-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

Խնկոյս P-D31011702 31.01.2017

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | Շահառուներին բաշխվող քանակը (հատ) | Արժեքը ըստ փաստաթղթերի (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ծածկոցներ | Երևան | 828 | 828 | 13,880.48 |
| | Ընդամենը | | 828 | 828 | 13,880.48 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն՝* **Բ. Յամբարյան**